Հաստատում եմ՝ _____

Դպրոցի տնօրեն՝ Հ. Հարությունյան

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ուստարի

VIII դասարան

Դասղեկ՝. Մ. Օհանջանյան

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐ	Ուսումնա_դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	կատարողներ
1.	Զրույց <<ՈՒսումնառության ներքին կարգապահական կանոնները>> թեմայով: Նպատակը աշակերտներին ներկայացնել ռեժիմին, ձևավորել կարգապահական պատասխանատվություն	4 սեպտեմբեր	Դասղեկ աշակերտ
2.	«Արտակարգ իրավիճակ» ներկայացնել աղետների առաջացման պատճառները և հետևանքները:	11 սեպտեմբեր	Աշակերտ Դասղեկ նզպ ուսուցիչ
3.	<< ՀՀ անկախությունը>>: Հայրենասիրական դաստիարակություն	18 սեպտեմբեր	Դասղեկ աշակերտ
4.	Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում: Նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները	25 սեպտեմբեր	Դասղեկ աշակերտ
5.	<<>>: Գիտակցել ուսուցչի դերն ու նշանակությունը	2 հոկտեմբեր	Դասղեկ աշակերտ
6.	Զրույց << Ես և ուրիշները>> թեմայով: Ճանաչիր ինքդ քեզ և դիմացինիդ:	9 հոկտեմբեր	Աշակերտ Դասղեկ
7.	« Իմ սրտի ուղեկից Էրեբունի Երևան»:Քաղաքացիական դաստիարակություն:	16 հոկտեմբեր	Աշակերտ Դասղեկ
8.	Պետական խորհրդանիշեր թեմայով զրույց: Նպատակն է աշակերտներին ներկայացնել խորհրդանիշների ձևավորման ուղին:	30 հոկտեմբեր	Աշակերտ Դասղեկ
9.	Զրույց <<Հոգատար վերաբերմունք միմյանց նկատմամբ>> թեմայով: Ձևավորել ջերմ հարաբերություններ, սիրել և հարգել միմյանց::	6 նոյեմբեր	Աշակերտ Դասղեկ
10.	Թրաֆիքինգի սահմանումը: Մարդկանց շահագործման կանխարգելմանը որքան ծանոթ լինեն, այնքան պաշտպանված կլինեն:	13 նոյեմբեր	Աշակերտ Դասղեկ հոգեբան
11.	«Խաղաղության մաշակույթի ձևավորումը»: Երբ սկսվեց սառը պատերազմը և ինչի հանգեցրեց:	20 նոյեմբեր	Աշակերտ Դասղեկ

12.	Բջջային հեռախոսների վտանգավոր ազդեցությունը: Իմանալ վտանգավորության աստիճանը:	27 նոյեմբեր	Աշակերտ Դասղեկ
13.	«Երկրաշարժը և դրա հետևանքները»: Իրազեկել թե ինչպես պաշտպանվել երկրաշարժից:	4 դեկտեմբեր	Աշակերտ Դասղեկ
14.	<<Ներողամտություն թե վրեժխնդրություն>>:Օրինակների միջոցով աշակերտը հասկանա և ընտրի որն է պետք կյանքում:	11 դեկտեմբեր	Աշակերտ Դասղեկ
15	«Անձնական ես-ի ընկալումը» քննարկում	18 դեկտեմբեր	Աշակերտ Դասղեկ
16	«Ամանորյա հրաշք» միջոցառում:	8 հունվար	Աշակերտ Դասղեկ
17	«Կոնֆլիկտների ծագումն ու հաղթահարումը» բանակցությունների դերը այս դեպքում:	15 հունվար .	Աշակերտ Դասղեկ
18	«Քաղաքակիրթ լինել նշանակում է ...» քննարկում	22 հունվար	Աշակերտ Դասղեկ
19	«Հայրենասեր լինել նշանակում է ....» քննարկում	29 հունվար	Աշակերտ Դասղեկ
20	«Ինքնաներկայացում»: Գնահատել իր բացասական և դրական կողմերը:	5 փետրվար	Աշակերտ Դասղեկ
21	Զրույց <<ձեր երազանքները>> թեմայով:	12 փետրվար	Աշակերտ Դասղեկ
22	<<Կարող եմ օգտակար լինել>>: Թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել դրական հատկանիշներ:	19 փետրվար	Աշակերտ Դասղեկ
23	«Քանի լեզու գիտես այդքան մարդ ես» թեմայով զրույց	26 Փետրվար	Աշակերտ Դասղեկ
24	«Եթե ես լինեի ...» թեմայով քննարկում, նպատակն է վեր հանել կարողություններն և հմտությունները	4 մարտ	Աշակերտ Դասղեկ
25	«Բնական պաշարներ» թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտներում	11 մարտ	Աշակերտ Դասղեկ
26	Զրույց <<ազգային ինքնություն>> թեմայով:	18 մարտ	Աշակերտ Դասղեկ
27	«Ազգ և պետություն» թեմայով բաց քննարկում և վերլուծություն	1 ապրիլ	Աշակերտ Դասղեկ
28	«Ազգային և միջազգային տոներ» ազգային տոների առանձնահատկություններն ու ազդեցությունները	8 ապրիլ	Աշակերտ Դասղեկ

29	«Եկեղեցին և ազգը» քննարկման միջոցով աշակերտների մոտ հիմնավորել եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում	15 ապրիլ	Աշակերտ Դասղեկ
30	«Բարեկամներ և թշնամիներ» քննարկման միջոցով ներկայացնել հայ-ադրբեջանական խնդիրների ծագման պատճառները	22 ապրիլ	Աշակերտ Դասղեկ
31	«Հայոց մեծ եղեռն» աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունները, նրանց մոտ սերմանել հայրենասիրություն	29 ապրիլ	Աշակերտ Դասղեկ
32	«Ազգային զարթոնք»: Ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգը:	6 մայիս	Աշակերտ դասղեկ
33	«Պետք է արդյոք խնայել» խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	13 մայիս	Աշակերտ Դասղեկ
34	Ներքին կարգապահական հարցերի քննարկում:	20 մայիս	

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը): Դասարանը բաղկացած է 4 աշակերտներից: Դասարանում սովորում են 4 աղջիկ: Դասարանում բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների թիվը մեծ է: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, չկան դժվար դաստիարակվողներ, սիրով և ժամանակին են հաճախում դպրոց:
2. ՈՒսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում: Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչ է, որի հիմնական խնդիրներն են սովորողների մեջ քաղաքացիական պատասխանատվության և իրավական գիտակցության ձևավորումը: ՈՒսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Պետք է աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ:
3. Հայեցի դաստիարակություն:

- Հոգևոր դաստիարակություն այս նպատակով աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ :Զրույցներ անցկացնել եկեղեցիական տոների մասին:
- Գեղագիտական դաստիարակություն-զրույցների,էքսկուրսիաների, պոեզիայի երեկոների, հանդիպումների միջոցով ձևավորել գեղագիտական ճաշակ:
- Ռազմահայրենասիրական դաստաիարակություն- կազմակերպել միջոցառումներ, ցերեկույթներ աշակերտների մեջ բարձրացնել ռազմահայրենասիրական ոգին: Հիշել հերոսներին, նրանց սխրանքները, հաղթանակի օրերը, նշել հայոց բանակի օրը:
- Ֆիզիկական դաստիարակություն-ֆիզիկական դաստիարակության առանցքը «առողջ հոգին առողջ մարմնում» դրույթն է, իսկ դրա գրավականներն են ֆիզիկական աշխատանքը, մարզումը, վարժությունները, որոնց միջոցով պետքէ կոփեն իրենց մարմինները:
- Աշխատանքային դաստիարակություն- աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը, նյութական արժեքների պահպանման աշխատելու պահանջ և ձգտում ունենալու դաստիարակումը:
- Բնապահպանական դաստիարակություն-աշակերտներին ծանոթացնել բնապահպանական հիիմնախնդիրներին, դրանց էությանը, և ուշադրություն դարձնել հիմնախնդիրների լուծմանը:

4. Դպրոց-ընտանիք կապը: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը, միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետքէ սերտ կապի մեջ պահեն դպրոց- ընտանիք կապը, որպիսի ավելի լավ սովորեն: